IV

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ: ՏԱՐԲԵՐ ՀԱՐՑԵՐ

ДОПОЛНЕНИЯ. РАЗНЫЕ ВОРОСЫ

ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ 60-ԱՄՅԱԿԸ

(Հիմնադրի հոբելյանական խոսքը)

2013 թ. դեկտեմբերին լրացավ ՀՀ ԳԱ նախագահությանը կից փիլիսոփայության ամբիոնի (այժմ՝ ՀՀ ԳԱԱ նախագահությանը կից Միջազգային գիտակրթական կենտրոնի ամբիոն) հիմնադրման 60 տարին: Իբրև այդ գործընթացի անմիջական ակտիվ մասնակիցներից մեկը՝ ցանկանում եմ ընթերցողին պատմել, թե ինչպես է դա իրականացվել:

1952 թ. աշնանը Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում թեկնածուական դիսերտացիայի հաջող պաշտպանությունից հետո ես վերադարձա Երևան և դասախոսական աշխատանքի անցա մայրաքաղաքի բուհերում:

1953 թ. դեկտեմբեր ամսի երկրորդ կեսին ինձ առաջարկեցին փիլիսոփայության սեկտորի ավագ գիտական աշխատողի պաշտոնը, ինչին տվեցի իմ համաձայնությունը: Նույն օրերին ինձ զրույցի հրավիրեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ.Հ.Համբարձումյանը, որի հետ լավ ծանոթ էի համալսարանում իմ ուսանելու տարիներից՝ իբրև անվանական թոշակառուի (նաև՝ Ստալինյան) և ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության, որը, ի դեպ, առաջինն էր հանրապետությունում) նախագահի, ում հետ բազմիցս հանդիպել էի համալսարանում, այդ թվում և բուհի գիտական խորհրդի նիստերին, որի անդամն էի ես՝ որպես ՌԳԸ-ի նախագահ: Համաշխարհային համբավ ունեցող գիտնականը շնորհավորեց ինձ Գիտությունների ակադեմիայի աշխատողների հաստիքացուցակի մեջ մտնելու կապակցությամբ, ինչն իրականացվեց, հավանորեն, ոչ առանց

իր գիտության, և անցավ մեր հանդիպման առարկային, ինչի համար էլ ինձ հրավիրել էր զրույցի:

Վ.Համբարձումյանն ասաց մոտավորապես հետևյալը. «Ձեր աշխատանքի նշանակումը Ակադեմիայում ես դիտում եմ իբրև հնարավորություն՝ հանձնարարել ձեզ զուգահեռաբար կատարել և այլ ֆունկցիա: Մեր երիտասարդ գիտնականների փիլիսոփայա-մեթոդաբանական մակարդակի բարձրացման նպատակով ես մտադիր եմ հրաման արձակել Գիտությունների ակադեմիայի նախագահությանը կից կազմակերպել ասպիրանտների և հայցողների համար սիստեմատիկ պարապմունքներ, որոնք կնպաստեն դրանց հիման վրա ստեղծել փիլիսոփայության ամբիոն, և ցանկանում եմ, որ ձեր վրա վերցնեք դասախոսությունների ընթերցումը և ամբիոնի ստեղծման կազմակերպական աշխատանքը: Ծանոթ լինելով համալսարանի Ուսանողական գիտական ընկերությունում ձեր կազմակերպչական աշխատանքին և ձեռքի տակ ունենալով դրական կարծիքները ձեր կողմից կարդացվող դասախոսությունների մակարդակի մասին, ես կարծում եմ, որ դուք կկարողանաք կատարել այս աշխատանքը: Իհարկե, ցավոք, մինչև ամբիոնի պաշտոնական ձևակերպումը, վարձատրությունը կլինի ժամավճարի ձևով: Դուք կհամաձայնվեի՞ք այս պարտականությունը վերցնել ձեզ վրա»:

Կարող էի արդյո՞ք հրաժարվել նման ոչ միայն հետաքրքիր, այլև իմ ինքնասիրությունը շոյող և հեղինակավոր առաջարկությունից, մանավանդ որ այն արվում է համաշխարհային մակարդակի մեծ գիտնական, ակադեմիկոս Վ. Համբարձումյանի կողմից, որը ուշադիր և շահագրգիռ ձևով էր մոտենում փիլիսոփայությանը և ոչ ֆորմալ-պաշտոնական դիրքերից, այլև գիտության մեջ նրա ռեալ դերից ելնելով: Հիշեցնեմ, որ նրա հետազոտությունների բնագավառը՝ աստղագիտությունը, լայն իմաստով ծայրեծայր փիլիսոփայական բնույթ ունի, ինչն էլ հիմք հանդիսացավ հրատարակել նրա աշխատությունների ժո-

դրվածում՝ «Տիեզերքի մասին գիտության փիլիսոփայական հարցերը» վերնագրով (В.А.Амбарцумян. Философские воросы науки о Вселенной, Ереван, 1973): Ակադեմիկոս Վ.Համբարձումյանը նաև ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությանը կից ակադեմիայի գիտական աշխատակիցների համար «Փիլիսոփայական (մեթոդաբանական) սեմինարների խորհրդի» ստեղծման նախաձեռնողն էր: Ինքնին հասկանալի է, որ ես պարզ գիտակցում էի և այն մեծագույն պատասխանատվությունը, որ կապված էր նրա առաջարկության հետ: Մի խոսքով, ես տվեցի իմ համաձայնությունը՝ ստանձնել այդ պարտականությունը, իսկ ակադեմիկոս Վ.Համբարձումյանն ասաց, որ այսօր հրամանը կստորագրվի, և վաղվանից կարող եմ գործի անցնել, իսկ մանրամասնությունները կարող եմ իմանալ ասպիրանտուրայի վարիչից: Ես շնորհակալություն հայտնեցի վստահության համար և հավաստիացրի, որ կանեմ ամենը, որ արդարացնեմ այն: Եվ սկսվեց իմ մարաթոնը՝ այդ՝ ինձ համար նոր, բարդ և պատասխանատու ասպարեզում, որը տևեց 23 տարի:

Այդ տարիները ես վերհիշում եմ առանձնապես ջերմ զգացմունքներով. գիտահետազոտական, գիտակազմակերպչական և հրատարակչական ակտիվ գործունեությանը զուգահեռ՝ ես մեծ ոգևորությամբ տրվեցի դասախոսական աշխատանքին՝ որպես իմ աշխատանքային կյանքի կարևոր բաղկացուցիչ մասը, որը տալիս էր ինձ մեծ բավարարվածություն, և որի պտուղները ես հնարավորություն ունեի մշտապես նկատել:

Երբ ակադեմիկոս Վ. Համբարձումյանի հետ զրույցից հետո ես ներկայացա Գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայի բաժնի վարիչ, հիանալի աշխատող և մարդ Ա. Ս. Կարապետյանին, որի հետ ընկերական ջերմ կապերի մեջ էի, նա, արդեն իմանալով իմ այցելության նպատակը, միանգամից սկսեց ծանոթացնել ինձ գործի էությանը: Նրանից ես իմացա, որ դասախոսությունները պետք է կարդացվեն երկու հոսքերում, համա-

պատասխանորեն երկու լեզվով՝ հայերեն և ռուսերեն, և հանդիպել ունկնդիրների հետ շաբաթը երկու անգամ: Սակայն, հաշվի առնելով, որ ուսումնական առաջին տարին սկսվում էր, փաստորեն, երկրորդ կիսամյակից, նպատակահարմար էր ունկնդիրների հետ հանդիպումներն անցկացնել շաբաթական չորս անգամ:

Տուն գալով՝ ես սկսեցի քննության ենթարկել պարապմունքների կազմակերպման պլանը: Այդ աշխատանքը ոչ միայն պատասխանատու էր, այլև նոր ու բավական բարդ: Նշեմ, որ ասպիրանտներին և հայցողներին փիլիսոփայության դասավանդման նման ձևի ու մասշտաբի փորձ մինչ այդ չի եղել: Առաջին բարդությունը այն էր, որ, ի տարբերություն բուհերի, որտեղ փիլիսոփայությունը ամեն մի առանձին դեպքում մատուցվում էր ըստ մասնագիտության և հասակի միասեռ կոնտինգենտին, այստեղ մենք գործ ունեինք տարբեր ու շատ մասնագիտությունների և հասակի ներկայացուցիչների հետ: Բացի այդ, բացառվում էր նաև բուհական ծրագրի պարզ կրկնությունը, որովհետև բուհում փիլիսոփայության դասավանդման մակարդակից (որը տարբեր կարող էր լինել) և մեր ունկնդիրների առարկան յուրացնելու աստիճանից բուհական դասընթացի կրկնորդումը կարող էր իջեցնել հետաքրքրությունն առարկայի նկատմամբ, որը նրանք արդեն ուսումնասիրել էին, և գնահատական ստացել քննություն հանձնելիս: Հիշատակված երկու հանգամանքներն էլ ստիպողաբար պահանջում էին գտնել այնպիսի մոդուս, որը, չկրկնելով բուհական ծրագիրը, հավասարապես գրավիչ լիներ բոլորի համար: Դա վերջնականապես համոզեց ինձ այն բանում, որ ունկնդիրներին պետք է՝ հենվելով փիլիսոփայության վրա, կարդալ գիտական ճանաչողության մեթոդաբանության դասընթացը, ինչը կազմում է փիլիսոփայական գիտելիքի գերխնդիրը, դասախոսություններում օգտագործելով նյութեր փիլիսոփայության պատմությունից, տրամաբանությունից, գիտության բարոյագիտությունից և գիտական աշխատանքի գեղագի-

տությունից: Միանգամայն հասկանալի է, որ ինչպես լաբրանի տարասեռ կոնտինգենտը, այնպես էլ ապագա պարապմունքների ձևակերպված էությունն ու ուղղվածությունը դրդում էին ինձ՝ ունկնդիրների հետ փոխըմբռնման հասնելու համար դիմել գիտելիքների նոր աղբյուրների օգտագործմանը: Այդ լրացուցիչ ծանրաբեռնվածությունը, անշուշտ, բարդացնում էր իմ աշխատանքը, բայց միաժամանակ մեծ բավարարվածություն էր տալիս, որովհետև, համալրելով գիտելիքներս, ավելի վստահորեն էի զգում ինձ բազմամասնագիտական լսարանի առջև: Բացի այդ, ուսումնական ամեն տարվա սկզբին ունկնդիրներին առաջարկում էի, խորհրդակցելով իրենց գործընկերների և ինձ հետ, ընտրել յուրաքանչյուրի ատենախոսության հետ կապված ռեֆերատի թեմա՝ սեմինարների ժամանակ ընթերցելու և քննարկելու համար: Ի դեպ, ընդգծում էի, որ զեկուցումներում նրանք կարող են՝ իրենց տեսակետները շարադրելիս, լինել մաքսիմալ ազատ և ինքնուրույն, կարևոր է, որ դրանք լինեն բավարար չափով հիմնավորված և համոզիչ, որովհետև գնահատականները դրվելու են՝ ապացույցների համակարգ կառուցելու ունակությունը հաշվի առնելով: Պետք է ասեմ, որ ներկայացվել ու քննարկվել էին բավական շատ լավ ռեֆերատներ, որոնք ոչ միայն բացահայտում էին հեղինակների մասնագիտության նյութի խորը և լայն ընդգրկումը, այլև վկայում էին նրանց կողմից գիտական ճանաչողության մեթոդաբանության լավ յուրացումը: Մյուս կողմից՝ տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչների մասնակցությունն այդ քննարկումներին նպաստում էր ունկնդիրների գիտելիքների ընդհանուր մտահորիզոնի ընդլայնմանը և իրենց գիտության ընկալմանն աշխարհի համընդհանուր գիտական ճանաչման համատեքստում, մյուս գիտությունների փոխհարաբերությունների մեջ:

Չեմ թաքցնի, որ ռեֆերատների քննարկումը տալիս էր ոչ պակաս օգուտ և ինձ, քանի որ ներքաշում էր գիտական մտքի նորույթների ոլորտը, որը շարադրում էին ըն-

դունակությամբ և լայն մտահորիզոնով օժտված ունկնդիրները: Իմ մասնագիտական և ընդհանուր գիտելիքների համալրումը, ընթերցվող դասախոսությունների հոկումը և կատարելագործումը բարձրացնում էին և իմ պրոֆեսիոնալ մակարդակը որպես դասախոսի, դրանով մեկ անգամ ևս հաստատելով հին լատինական docendo discimus իմաստության ճշմարտությունը:

Հարաբերություններս ունկնդիրների հետ ջերմ էին, կասեի՝ անգամ բարեկամական, փոխադարձ հարգանքի զգացմունքով տոգորված: Չեմ կարող մոռանալ փողոցով անցնող անցորդների ուշադրությունը գրավող հետևյալ պատկերը. պարապմունքներն ավարտելուց հետո ունկնդիրներս խմբով ուղեկցում էին ինձ մինչև տուն, ճանապարհին շարունակելով զրուցել քիչ առաջ դասախոսության թեմայի շուրջ կամ իրար հետ վիճելով նույն հարցերի մասին: Ի դեպ, երիտասարդ դասախոսներին որպես խրատ ցանկանում եմ ասել. դասախոսի և ունկնդրի բարյացակամ հարաբերություններից զգալի չափով կախված է և՛ հետաքրքրությունը դասավանդվող առարկայի նկատմամբ, և՛ նրա յուրացման մակարդակը: Իսկ դասախոսի համար դա դառնում է ամենամեծ սփոփանքը և իր աշխատանքի պարգևը:

Ակադեմիայում անցկացվող պարապմունքների բարի համբավը շուտով տարածվեց մայրաքաղաքում, և 1954-ից ակադեմիայի ղեկավարության հետ համաձայնության հիման վրա՝ ունկնդիրների լսարանն համալրվեց նաև արտաակադեմիական գիտահետազոտական ինստիտուտների ու որոշ բուհերի ասպիրանտներով և հայցողներով: Լսարանի հագեցվածությունն անգամ դրդեց Հայէլեկտրագործարանին կից բացել մեր կիսակազմակերպված ամբիոնի մասնաճյուղը, որտեղ պարապմունքներն անց էր կացնում մեր ինստիտուտի աշխատակից Ռ.Գ.Նավասարդյանը: Դասախոսություններն Ակադեմիայի լսարանում կարդում էի ես, իսկ սեմինարները համապատասխան մասնագիտացված խմբերում ինձանից և

Ռ. Գ. Նավասարդյանից բացի, նաև իմ կողմից ներգրավված, նույնպես մեր սեկտորի (հետագայում ինստիտուտի) փորձառու աշխատակիցներ Ս.Ս.Թովմասյանը և Ա.Մ.Թևոսյանը: Պետք է ընդգծեմ, որ բոլորը մեծ ոգևորությամբ և շահագրգռվածությամբ էին կատարում իրենց աշխատանքը, ինչը, ի դեպ համահունչ էր ունկնդիրների սովորելու բուռն ձգտմանը, որը այսօր, ցավոք, բացակայում է: Ինչևէ, դահլիճը միշտ հագեցված էր, և բացակայություններ համարյա չկային:

Ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ.Համբարձումյանը միշտ հետաքրքրվում էր մեր դասընթացների վիճակով, իսկ Ակադեմիայի նախագահության 1957 թ. դեկտեմբերի 11-ի որոշման մեջ՝ նիստում քննարկված «1957 թ. Փիլիսոփայության սեկտորի գործունեության մասին» հարցի մասին հատուկ նշվեց. «Սեկտորը զգալի աշխատանք է կատարել Գիտությունների ակադեմիայի ասպիրանտներին դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի կազմակերպման և դասավանդման գործում (դասախոս՝ ավագ գիտական աշխատող Յա.Ի.Խաչիկյան)»: Երեք տարի անց՝ 1960 թ. դեկտեմբերի 7-ին, «Գիտական կադրերի պատրաստման բնագավառում կատարած բեղմնավոր աշխատանքի համար» ձևակերպումով պարգևատրվեցի Գիտությունների ակադեմիայի նախագահության և Լուսավորության աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեի նախագահության պատվոգրով:

Այս աշխատանքը, գիտահետազոտականի հետ միասին, հաշվի էր առնվել նաև 1985 թ., երբ ինձ շնորհվեց ՀԽՍՀ «Գիտության վաստակավոր գործիչ» պատվավոր կոչումը: Գիտահետազոտական գործունեությունս, զուգորդված մշտական դասախոսականի հետ, հիմք հանդիսացավ 2004 թ. հունվարի 30-ին ՌԴ մանկավարժական և սոցիալական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ (ակադեմիկոս) ընտրվելուս համար:

Հասկանալի է, որ այս ամենը դրական էմոցիաներ է առաջացնում իմ մեջ: Միակ բանը, որ որոշ ափսոսանք է հարուցում, կապված է հետևյալ հանգամանքի հետ: Լավ հիշելով այն, թե ուսանողական տարիներին որքան տաղտկալի էր լինում ունկնդրել այն դասախոսներին, որոնք, բառի բուն իմաստով, ***կարդում*** էին դասախոսությունները՝ պատրաստված տեքստերի ընթերցումով, ես իմ կյանքում առաջին իսկ դասախոսություններից ընտրեցի նյութի դասավանդման բանավոր ձևը, որում որոշակի տեղ էր պատկանում իմպրովիզացիոն բաղկացուցչին, և որը՝ ամբողջությամբ վերցրած, ոչ միայն չէր հոգնեցնում ու ձանձրացնում լսողներին, այլև գրավում էր նրանց ուշադրությունը: Եվ ափսոսում եմ, որ ոչ դասախոսությունը կարդալուց առաջ, ոչ էլ դրանից հետո ես չպահեցի անգամ սխեմատիկ ձևով որոշ գրառումներ, իսկ ինչպես արդեն նշել եմ՝ կարդացածս դասախոսությունների ասպեկտը և բովանդակությունը տարբերվում էին սովորականից: Բավոք, ձայնագրիչներն այն ժամանակ դեռ չէին մտել կենցաղի մեջ և իմ կարդացած նյութը մոռացվեց, և ես այժմ չեմ կարող, թեկուզ մոտավորապես, վերականգնել այդ դասախոսությունները: Բայց ինչ եղավ՝ եղավ, և այդ դառնությունն ամենակարևորը չէ դասախոսությունների բերած օգուտի գիտակցման ֆոնի վրա: Իսկ այդ մասին ջերմ և սրտագին ասացին հենց իրենք՝ իմ ունկնդիրները:

«Ողջույնի խոսք նախկին ունկնդիրներից
(17 հուլիսի 2006 թ.)

Մեծարգո Յակով Իվանովիչ:

Մենք՝ Ձեր նախկին սաները, ողջունում ենք Ձեզ՝ անվանի գիտնականին և հմուտ դասախոսին ու մանկավարժին՝ 85-ամյակի կապակցությամբ և հղում մեր ջերմ մաղթանքները և երախտագիտության խոսքը: Դուք մեծ ավանդ եք ներդրել Հայաստանում գիտական կադրերի պատրաստման գործում՝ շուրջ քառորդ դար փիլիսոփա-

յություն դասավանդելով ՀԽՍՀ ԳԱ և հանրապետության այլ գիտահետազոտական հիմնարկությունների, ինչպես նաև բուհերի ասպիրանտներին և հայցվորներին: Ձեր այդ հայրենանվեր աշխատանքը արժանացավ աշխարհահռչակ գիտնական, Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ.Համբարձումյանի բարձր գնահատականին, որի ստորագրությամբ Դուք «Գիտական կադրերի պատրաստման բնագավառում կատարած բեղմնավոր աշխատանքի համար» պարգևատրվեցիք պատվոգրով և ձեռք բերեցիք Ձեր ունկնդիրների անկեղծ հարգանքն ու սերը:

Մենք մինչև հիմա էլ հիշում ենք Ձեր լայն էրուդիցիան ոչ միայն փիլիսոփայության, այլև տարբեր գիտությունների բնագավառում, Ձեր բովանդակալից, անկաշկանդ ազատ իմպրովիզացիոն բնույթի, տրամաբանորեն կուռ կառուցված դասախոսություններն ու գործնական պարապմունքները: Պատահական չէ, որ նրանք անցնում էին լեփ-լեցուն դահլիճներում, որտեղ հաճախ կարելի էր հանդիպել նաև փիլիսոփայությամբ հետաքրքրվող այլ անձանց:

Ձեր նվիրվածությունը դասավանդվող առարկային անցավ նաև մեզ և նպաստեց մեր աշխարհայացքի հղկմանը և մեթոդաբանական զինվածությանը: Շնորհիվ դրա մեզանից ոմանք, ովքեր բուհն ավարտել էին, մեղմ ասած, առանց ջերմ զգացմունքների փիլիսոփայության հանդեպ, հրապուրվեցին դրանով և դարձան անգամ փիլիսոփայության սիրահար: Ձեզանից ստացած գիտելիքները այսօր էլ օգնում են մեզ գիտահետազոտական աշխատանքում:

Շնորհավորելով սիրելի դասախոսին 85-ամյակի առիթով՝ ցանկանում ենք Ձեզ առողջություն, երկարակեցություն և նորանոր նվաճումներ գիտության մեջ՝ ի փառս մեր ժողովրդի ու հայրենիքի:

Ձեր նախկին ունկնդիրներ և հավիտյան աշակերտներ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ՝ Ադամյան Կ. Գ., Ալեքսանյան Յու. Թ., Առաքելյան Ն. Հ., Բաղդասարյան Գ. Ե., Դավթյան Մ. Ա., Խոջաբեկյան Ց. Ե., Կոստանյան Կ. Ա., Պողոսյան Կ. Ս., Ջրբաշյան Ռ. Տ., Քուչուկյան Ա. Թ.

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ՝ Էդոյան Ռ. Հ., Մայրապետյան Ս. Խ., Պարսամյան Է. Ս.

Գիտության դոկտորներ՝ Գասպարյան Յու. Ա., Կիրակոսյան Վ. Ա., Հասրաթյան Մ. Մ., Հարությունյան Բ. Հ., Հովհաննիսյան Լ. Շ., Մելիք-Օհանջանյան Ռ. Գ., Մուրադյան Լ. Գ., Պետրոսյան Է. Խ., Սիմոնյան Ա. Ա., Սվազլյան Վ. Գ., Քալանթարյան Ա. Ա.»:

Ինձանից հետո (1953–1976 թթ.) Փիլիսոփայության ամբիոնը ղեկավարել են փիլիսոփայական գիտությունների դոկտորներ՝ Ս.Հ.Ավետիսյանը (1976–1981 թթ.), Ա.Մ.Թևոսյանը (1981–1992 թթ.), Ա.Ս.Մանասյանը (1992–2003 թթ.), փիլիսոփայական գիտությունների թեկնածու Մ.Ա.Հարությունյանը (2003-ից մինչև այժմ): Բացի Ա.Թևոսյանից, մնացած երեքը եղել են իմ դասընթացների ունկնդիրները:

Ողջունելով հարազատ ամբիոնի 60-ամյակը՝ ցանկանում եմ նրան երկարակեցություն և նոր հաջողություններ: